



ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆ ԱՐԳԵԼ ՎՈՒՄ Է ՆԱԽՔԱՆ
ՀՈԿՏ ԵՍԲԵՐԻ 27, 2015

Հոկտեմբերի 22, 2015

Համապատասխանության ապահովման պաշտպան-
խորհրդականի (ՀԱՊ) գրասենյակ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ << Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ >> ծրագրում (Ծրագիր #27657) ՄՖԿ-ի կողմից
կատարված ներդրումներ

Բողոք N 02

Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդը (այսուհետ՝ ընկերություն) Միացյալ Թագավորությունում հիմնված և հանքերի հետազոտմամբ զբաղվող ցուցակագրված կրտսեր ընկերություն է, որը Հայաստանում իրականացնում է Ամուլսարի ոսկու հանքի ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր): ՄՖԿ-ն առաջին անգամ ընկերությունում ներդրում է կատարել 2007 թ. Կոստվոյում, Հայաստանում և Թուրքիայում Լիդիանին պատկանող հանքային ռեսուրսներին առնչվող հետազոտման աշխատանքները և իրագործելիության ուսումնասիրությունները ֆինանսավորելու համար: Այս նախնական ներդրմանն հաջորդել է 6 լրացուցիչ ներդրում և բաժնետոմսերի 5 երաշխավորագրի տրամադրում: Ներկայումս ՄՖԿ-ին է պատկանում Լիդիանի բաժնետոմսերի 7.9 տոկոսը, ինչը կազմում է 17.3 միլիոն կանադական դոլար ներդրումների տեսքով:

Զեկույցը գրելու պահին ծրագիրը գտնվում էր իրագործելիության առաջընթաց փուլում: Իրագործելիության մանրակրկիտ ուսումնասիրությունից և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումից (ՇՄԱԳ) հետո 2014 թ. նոյեմբերին ընկերությանը տրվել է հանքարդյունահանման թույլտվություն: Միջազգային չափանիշներին համապատասխանող Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումը (ԲՄԱԳ) հրապարակվել է 2015 թ. մայիսին: Ակնկալվում է, որ ծրագիրը կանցնի զարգացման և շինարարության փուլին 2015 թ. վերջին՝ նպատակ ունենալով իրականացնել ոսկու առաջին ամբողջական արտադրություն 2017 թ.:

Բողոքը ներկայացվեց ՀԱՊ-ին 2014 թ. հուլիսին Վայոց ձորի մարզի Գնդեվազ գյուղի 148 բնակչի կողմից: Բողոքարկուները հայտնում էին մտահոգություններ ապրուստի միջոցների, շրջակա միջավայրի և համայնքի առողջության վրա ծրագրի ունեցած հետևանքների վերաբերյալ: Բողոքում մասնավորապես նշվում են ծրագրի առնչությամբ պատշաճ տեղեկատվության, այդ թվում՝ հողատարածքների ձեռքբերման և վերաբնակեցման ծրագրերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության պակասը, նախագծով կառուցվող ցիանային հարթակի կառուցման արդյունքում շրջակա միջավայրի հնարավոր աղտոտումը, արոտավայրերի, անասունների և արտերի վրա բացասաբար ազդող

աղտոտված փոշին, աշխատողների և համայնքի առողջական խնդիրները, ինչպես նաև համայնքի անբավարար ներգրավվածությունը:

ՀԱՊ-ի կողմից իրականացվող գնահատման փուլում բողոքարկուներն ու ընկերությունը պահանջեցին կիրառել ՀԱՊ-ի վեճերի լուծման գործընթացը՝ փորձելու համար լուծել բողոքում բարձրացված խնդիրները համատեղ մոտեցմամբ: Չնայած որ վերոնշյալ գործընթացը սկսվել է 2015 թ. փետրվարին՝ բողոքարկուներին ու ընկերությանը չհաջողվեց գալ համաձայնության, և ուստի գործը փոխանցվեց ՀԱՊ-ի Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկողության ստորաբաժանում գնահատելու համար ՄՖԿ-ի գործունեությունը բողոքի և ՀԱՊ-ի գնահատման զեկույցում բարձրացված խնդիրների առնչությամբ:

Համապատասխանության փորձաքննության մասին սույն զեկույցը հիմնված է 2015 թ. ապրիլին գրված զեկույցի վրա, որը վերաբերում էր նույն ծրագրին: Վերջինիս հիմքում ընկած էր Գնդեվազ գյուղի և Ջերմուկ քաղաքի բնակիչների, ինչպես նաև նրանց աջակցող 9 հասարակական կազմակերպությունների (ՀԿ) ներկայացված բողոքը: Արդյունքում, ՀԱՊ-ը որոշել էր, որ այս ներդրման առնչությամբ ՄՖԿ-ի բնապահպանական և սոցիալական (ԲՍ) գործունեության համապատասխանության փորձաքննությունն երաշխավորված է:

Ուստի, սույն զեկույցի շրջանակը սահմանափակվում է ա) ՀԱՊ-ին ուղղված Լիդիան-02 բողոքում բարձրացված խնդիրներով (դիտարկվում է այդ բողոքին առնչվող ՀԱՊ-ի գնահատման զեկույցի հետ միասին) և բ) 2015 թ. ապրիլին Լիդիան-01 բողոքին առնչվող գնահատման զեկույցի հրապարակումից ի վեր ՄՖԿ-ի կողմից ձեռնարկված լրացուցիչ վերահսկողական գործողություններով:

2015 թ. ապրիլին հրապարակված զեկույցում ՀԱՊ-ը եզրակացրեց, որ Լիդիան-01 բողոքը առաջացնում է էական մտահոգություններ ծրագրի բնապահպանական և սոցիալական հետևանքների տեսանկյունից, ինչպես նաև հանգեցնում խնդիրների՝ կապված ՄՖԿ-ի քաղաքականության, ընթացակարգերի և չափանիշների հետ:

Սույն զեկույցում ներկայացված փորձաքննության գործընթացի միջոցով ՀԱՊ-ը վերհանել է լրացուցիչ խնդիրներ ՄՖԿ-ի կողմից իր՝ ծրագրին առնչվող ԲՍ պահանջների վերանայման և վերահսկողության, մասնավորապես՝ հողատարածքի ձեռքբերման (ԳՉ 5) վերաբերյալ:

Այս համատեքստում ՀԱՊ-ը որոշել է միասին դիտարկել Լիդիան-01 և Լիդիան-02 բողոքներում բարձրացված խնդիրները: Ուստի, երկու գործերը կմիացվեն Տեխնիկական առաջադրանքին, որը կհրապարակվի համաձայն ՀԱՊ-ի Գործառնական ուղեցույցի:

Համապատասխանության փորձաքննության մասին զեկույց: ՄՖԿ ներդրումները Հայաստանի Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերությունում (Լիդիան-02)

Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականը (ՀԱՊ)

ՀԱՊ-ի առաքելությունն է ծառայել որպես խնդիրների լուծման անաչառ, վստահիված, արդյունավետ ու անկախ մեխանիզմ և բարելավել Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) և Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության (ԲՆԵԳ) հաշվետվողականությունը բնապահպանական և սոցիալական ոլորտներում:

ՀԱՊ-ն անկախ մարմին է, որն ուղղակիորեն հաշվետու է Համաշխարհային բանկի խմբի նախագահին: ՀԱՊ-ը դիտարկում է բողոքներ՝ ստացված այն համայնքներից, որոնք տուժել են Համաշխարհային բանկի խմբի մասնավոր հատվածին աջակցող երկու ճյուղերի՝ ՄՖԿ-ի և ԲՆԵԳ-ի կողմից իրականացվող ծրագրերի արդյունքում:

Ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու համար այցելե՛ք ՀԱՊ-ի կայք հետևյալ հղմամբ՝ www.cao-ombudsman.org:

Բովանդակություն

Հապավումների ցանկ.....	5
I. Ընդհանուր տեղեկատվություն չափանիշների համապատասխանության ստուգմանն ուղղված փորձաքննության մասին.....	6
II. Ներածական տեղեկատվություն.....	8
Ներդրումներ.....	8
Բողոքը.....	8
ՀԱՊ-ի վեճերի լուծման ընթացակարգը.....	9
Փորձաքննության շրջանակը.....	9
III. Վերլուծություն.....	10
Միջազգային բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (ԲՄԱԳ) գործընթացի վերահսկողություն.....	10
Հողատարածքի ձեռքբերում.....	10
Առողջության և անվտանգության ապահովումն աշխատավայրում.....	10
Եզրակացություն.....	11
IV. Որոշում.....	11
Հավելված.....	13

Հապավումների ցանկ

Հապավում	Սահմանում
ԱԱԱԱ	Աշխատավայրում առողջության և անվտանգության ապահովում
ԱՆԱ	Առաջարկված ներդրման ամփոփագիր
ԲԱԱ	Բնապահպանական, առողջական ու ապահովության
ԲՄ	Բնապահպանական և սոցիալական
ԲՄԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում
ԲՄԳԾ	Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր
ԲՄԿՀ	Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ
ԳԶ	Գործունեության չափանիշ
ՀԱՊ	Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականի գրասենյակ (ՄՖԿ և ԲՆԵԳ)
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՄԱՓ	Հաջող միջազգային արդյունաբերական փորձ
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՏԱ	Տեխնիկական առաջադրանք
CAD	Կանադական դոլար
TSX	Տորոնտոյի ֆոնդային բորսա

Համապատասխանության փորձաքննության մասին զեկույց: ՄՖԿ ներդրումները Հայաստանի Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերությունում (Լիդիան-02)

I. Ընդհանուր տեղեկատվություն չափանիշների համապատասխանության ստուգմանն ուղղված փորձաքննության մասին

ՄՖԿ կամ ԲՆԵԳ-ի որևէ ծրագրի վերաբերյալ բողոք ստանալուց հետո ՀԱՊ-ն այն ուղղորդում է գնահատման: Եթե ՀԱՊ-ը եզրակացնում է, որ կողմերը չեն ցանկանում կամ չեն կարող լուծել վեճը ՀԱՊ-ի աջակցությամբ, ապա գործը փոխանցվում է ՀԱՊ-ի Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկողության ստորաբաժանում գնահատման և հնարավոր աուդիտի անցկացման նպատակով:

Փորձաքննությունը կարող է նաև սկսվել ՀԱՊ-ի փոխնախագահի, ՄՖԿ/ԲՆԵԳ ղեկավարության կամ Համաշխարհային բանկի խմբի նախագահի նախաձեռնությամբ:

ՀԱՊ-ի Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկողության ստորաբաժանման վերահսկողության օբյեկտ են հանդիսանում ՄՖԿ-ն և ԲՆԵԳ-ը, այլ ոչ նրանց հաճախորդը: Սա վերաբերում է ՄՖԿ-ի ողջ գործունեությանը, այդ թվում՝ իրական հատվածին, ֆինանսական շուկաներին և խորհրդատվական ծառայություններին: ՀԱՊ-ը գնահատում է այն միջոցները, որոնք ձեռնարկվել են ՄՖԿ/ԲՆԵԳ-ի կողմից իրենց գործունեության կամ խորհրդատվության իրականացման համար, ինչպես նաև նրանց գործունեության արդյունքների համապատասխանությունը համապատասխան քաղաքականության դրույթների նպատակին: Սակայն հաճախ ծրագրի գործունեությունը և ՄՖԿ/ԲՆԵԳ-ի կողմից համապատասխան պահանջների համապատասխանեցմանն ուղղված միջոցների ձեռնարկումը գնահատելիս ՀԱՊ-ին անհրաժեշտ է վերանայել հաճախորդի գործողություններն ու տեղում ստուգել արդյունքները:

Աուդիտի նպատակահարմարությունը որոշելու համար ՀԱՊ-ը նախ իրականացնում է չափանիշների համապատասխանության ստուգմանն ուղղված փորձաքննություն: Վերոնշյալ գործընթացի նպատակն է ապահովել աուդիտի կիրառումը միայն այն ծրագրերի դեպքում, որոնք էական մտահոգություններ են առաջացնում բնապահպանական և (կամ) սոցիալական հետևանքների տեսանկյունից և (կամ) հանգեցնում ՄՖԿ/ԲՆԵԳ-ի համար համակարգային կարևորություն ունեցող խնդիրների:

Չափանիշների համապատասխանության ստուգմանն ուղղված փորձաքննությունն ուղղորդելու նպատակով ՀԱՊ-ը կիրառում է որոշ հիմնական չափանիշներ, որոնք ՀԱՊ-ին հնարավորություն են տալիս որոշում կայացնել փորձաքննության իրականացման նպատակահարմարության մասին, եթե առկա են.

- Ապացույցներ ներկա կամ հետագայում հնարավոր էական անբարենպաստ բնապահպանական և (կամ) սոցիալական հետևանքի (հետևանքների) մասին,
- ՄՖԿ/ԲՆԵԳ-ի կողմից քաղաքականության կամ գնահատման այլ չափանիշների խախտման կամ անպատշաճ կիրառման հատկանիշներ,
- Ապացույցներ առ այն, որ ՄՖԿ/ԲՆԵԳ-ի դրույթները նույնիսկ իրականացվելու դեպքում չեն ապահովել պաշտպանության պատշաճ մակարդակ:

Համապատասխանության փորձաքննության մասին զեկույց: ՄՖԿ ներդրումները Հայաստանի Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերությունում (Լիդիան-02)

Փորձաքննություն իրականացնելիս ՀԱՊ-ը քննարկումներ է անցկացնում համապատասխան ծրագրի հետ աշխատող ՄՖԿ/ԲՆԵԳ-ի անձնակազմի և այլ շահագրգիռ կողմերի հետ որոշելու համար, թե ինչ չափանիշներ է կիրառել ՄՖԿ/ԲՆԵԳ-ը ծրագրի գործունեությունն ապահովելու համար, ինչպիսի միջոցներ են ձեռնարկվել ՄՖԿ/ԲՆԵԳ-ի կողմից այդ չափանիշներին համապատասխանելու և բնակչության պաշտպանության համապատասխան մակարդակ ապահովելու, ինչպես նաև ընդհանրապես փորձաքննության իրականացման նպատակահարմարության մասին որոշում կայացնելու նպատակով: Փորձաքննության ավարտից հետո ՀԱՊ-ը կարող է փակել գործը կամ սկսել ՄՖԿ-ի կամ ԲՆԵԳ-ի գործունեության չափանիշների համապատասխանության ստուգմանն ուղղված աուդիտ:

Փորձաքննության ավարտից հետո ՀԱՊ-ը գրավոր ծանուցում է գործընթացի ավարտի մասին ՄՖԿ/ԲՆԵԳ-ին, Համաշխարհային բանկի խմբի նախագահին և Գործադիր տնօրենների խորհրդին: Եթե փորձաքննությունն անցկացվել է ՀԱՊ-ի Վեճերի լուծման ստորաբաժանումից փոխանցված գործի առնչությամբ, բողոքարկուն նույնպես գրավոր ծանուցվում է այդ մասին: Փորձաքննության բոլոր արդյունքների ամփոփումը հանրայնացվում է: Եթե չափանիշների համապատասխանության ստուգմանն ուղղված փորձաքննության արդյունքում ՀԱՊ-ը որոշում է սկսել աուդիտ, ապա վերջինս, համաձայն ՀԱՊ-ի Գործառնական ուղեցույցի, մշակում է փորձաքննության տեխնիկական առաջադրանք:

II. Ներածական տեղեկատվություն

Ներդրումներ

Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդը (այսուհետ՝ ընկերությունը) Բրիտանիայում հիմնված և Տորոնտոյի (Կանադա) ֆոնդային բորսայում (գնադրում՝ TSX:LYD) ցուցակագրված կրսուեր հանքարդյունաբերական կազմակերպություն է: Հայաստանում այն իրականացնում է Ամուլսարի ոսկու հանքի ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր): Վերջինս կառավարվում է Գեոթիմ ՓԲԸ-ի կողմից, որի բաժնետոմսերի 100%-ը պատկանում է Լիդիանին: ՄՖԿ-ն առաջին անգամ ընկերությունում ներդրում է կատարել 2007 թ. ֆինանսավորելու համար Կոստվոյում, Հայաստանում և Թուրքիայում Լիդիանին պատկանող հանքային ռեսուրսներին առնչվող հետազոտման աշխատանքներն ու իրագործելիության ուսումնասիրությունները: Այս նախնական ներդրմանն հաջորդել է 6 լրացուցիչ ներդրում և բաժնետոմսերի 5 երաշխավորագրի տրամադրում:

Ներկայումս ՄՖԿ-ին է պատկանում Լիդիանի բաժնետոմսերի 7.9 տոկոսը, ինչը կազմում է 17.3 միլիոն կանադական դոլար ներդրումների տեսքով: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) նույաես հանդիսանում է ընկերության բաժնետեր, ում պատկանում է բաժնետոմսերի 6.9 տոկոսը:

Զեկույցը գրելու պահին ծրագիրը գտնվում էր իրագործելիության առաջընթաց փուլում: Իրագործելիության մանրակրկիտ ուսումնասիրությունից և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումից (ՇՄԱԳ) հետո 2014 թ. նոյեմբերին ընկերությանը տրվել է հանքարդյունահանման թույլտվություն: Միջազգային չափանիշներին համապատասխանող Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումը (ԲՄԱԳ) հրապարակել է 2015 թ. մայիսին: Ակնկալվում է, որ ծրագիրը կանցնի զարգացման և շինարարության փուլին 2015 թ. վերջին՝ նպատակ ունենալով իրականացնել ոսկու առաջին ամբողջական արտադրություն 2017 թ.¹:

Բողոքը

Բողոքը ներկայացվեց ՀԱՊ-ին 2014 թ. հուլիսին Վայոց ձորի մարզի Գնդեվազ գյուղի 148 բնակչի կողմից: Բողոքարկուները հայտնում էին մտահոգություններ ապրուստի միջոցների, շրջակա միջավայրի և համայնքի առողջության վրա ծրագրի ունեցած հետևանքների վերաբերյալ: Բողոքում մասնավորապես նշվում են ծրագրի առնչությամբ պատշաճ տեղեկատվության, այդ թվում՝ հողատարածքների ձեռքբերման և վերաբնակեցման ծրագրերի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության պակասը, նախագծով կառուցվող ցիանային հարթակի կառուցման արդյունքում շրջակա միջավայրի հնարավոր աղտոտումը, արոտավայրերի, անասունների և արտերի վրա բացասաբար ազդող աղտոտված փոշին, աշխատողների և համայնքի առողջական խնդիրները, ինչպես նաև համայնքի անբավարար ներգրավվածությունը:

Վերոնշյալ խնդիրներն ակնհայտորեն մասամբ համընկնում են Լիդիան-01 բողոքում բարձրացված խնդիրների հետ (Լիդիան-01 և Լիդիան-02 բողոքներում բարձրացված

¹ Գեոթիմի կայք՝ <http://www.geoteam.am/en/home.html>

Համապատասխանության փորձաքննության մասին զեկույց: ՄՖԿ ներդրումները Հայաստանի Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերությունում (Լիդիան-02)

խնդիրների հակիրճ ցանկին ծանոթանալու համար տե՛ս Հավելվածը): Սակայն Լիդիան-02 բողոքում նաև բարձրացվում է երկու նոր խնդիր. ա) ավելի ընդհանուր մտահոգություններ հողատարածքի ձեռքբերման առնչությամբ հաճախորդի մոտեցման վերաբերյալ և բ) բացասական հետևանքներ Ամուլսարի աշխատողների վրա, ովքեր ենթադրաբար <<չեն ստացել համապատասխան բժշկական զննում և խնամք>>: Բացի այդ, Լիդիան-01 և Լիդիան-02 բողոքները ներկայացվել են ՀԱՊ տարբեր անձանց անունից:

ՀԱՊ-ի վեճերի լուծման ընթացակարգը

ՀԱՊ-ի գնահատման փուլում վերջինիս լիազորությունների շրջանակի, գործառնությունների և ծառայությունների քննարկումից հետո բողոքարկուներն ու ընկերությունը պահանջեցին կիրառել վեճերի լուծման գործընթացը փորձելու համար լուծել բողոքում բարձրացված խնդիրները համատեղ մոտեցմամբ: Չնայած որ վերոնշյալ գործընթացը սկսվել է 2015 թ. փետրվարին՝ բողոքարկուներին ու ընկերությանը չհաջողվեց գալ համաձայնության միջնորդության վերաբերյալ: Ուստի գործը փոխանցվեց ՀԱՊ-ի՝ Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկողության ստորաբաժանում գնահատելու համար ՄՖԿ-ի գործունեությունը բողոքի և ՀԱՊ-ի գնահատման զեկույցում բարձրացված խնդիրների առնչությամբ:

2015 թ. օգոստոսին հրապարակված ՀԱՊ-ի վեճերի լուծմանն առնչվող զեկույցը² համառոտ շարադրում է այն պատճառները, որոնք ստիպեցին կողմերին չշարունակել ավելի վաղ 2015 թ. սկսված վեճերի լուծման գործընթացը: Ջեկույցում նշվում է, որ բողոքարկուների պատասխանատուները որոշեցին, որ այլևս չեն ցանկանում մասնակցել գործընթացին: Նաև նշվում է, որ այս որոշման հիմքում ընկած անձնական պատճառները տարբեր էին. որոշ բողոքարկուներ չունեին բավարար վստահություն բանակցային գործընթացի նկատմամբ, իսկ մյուսները փոխեցին իրենց որոշումը վեճերի լուծման վերաբերյալ, քանի որ հողատարածքի ձեռքբերմանն առնչվող իրենց մտահոգությունները հասցեագրվել էին: Բացի այդ, ոմանք պարզապես դեմ էին հանքի շահագործմանը՝ անկախ հանգամանքներից, իսկ շատերն ի վիճակի չէին կամ չէին ցանկանում հանդիպել ՀԱՊ-ի հետ: Չնայած բողոքարկուների ներկայացուցչական կառուցվածքին առնչվող խնդիրներին՝ ՀԱՊ-ի վեճերի լուծման թիմը եզրակացրեց, որ կարողացել է համոզվել, որ ընդհանուր առմամբ ներկայացուցիչների կողմից գործընթացին չմասնակցելու որոշումն ամբողջությամբ արտացոլում է բողոքարկուների խմբի որոշումը:

Փորձաքննության շրջանակը

Համապատասխանության փորձաքննության մասին սույն զեկույցը հիմնված է 2015 թ. ապրիլին գրված զեկույցի վրա, որը վերաբերում էր նույն ծրագրին: Վերջինիս հիմքում ընկած էր Գնդեվազ գյուղի և Ջերմուկ քաղաքի բնակիչների, ինչպես նաև նրանց աջակցող 9 ՀԿ-ների ներկայացված բողոքը³: Արդյունքում, ՀԱՊ-ը որոշել էր, որ այս ներդրման առնչությամբ ՄՖԿ-ի բնապահպանական և սոցիալական (ԲՍ) գործունեության համապատասխանության փորձաքննությունն երաշխավորված է:

² ՀԱՊ-ի վեճերի լուծման ամփոփիչ զեկույց, Լիդիան Ինթերնեյշնլ 3-02/Գնդեվազ, ՀՀ, Օգոստոս 2015 <http://goo.gl/d6SMPO>

³ Տե՛ս Լիդիան-01-ը - <http://goo.gl/egEUEL>

Համապատասխանության փորձաքննության մասին զեկույց: ՄՖԿ ներդրումները Հայաստանի Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերությունում (Լիդիան-02)

Ուստի, սույն զեկույցի շրջանակը սահմանափակվում է ա) ՀԱՊ-ին ուղղված Լիդիան-02 բողոքում բարձրացված խնդիրներով (դիտարկվում է այդ բողոքին առնչվող ՀԱՊ-ի գնահատման զեկույցի հետ միասին) և բ) 2015 թ. ապրիլին Լիդիան-01 բողոքին առնչվող գնահատման զեկույցի հրապարակումից ի վեր ՄՖԿ-ի կողմից ձեռնարկված լրացուցիչ վերահսկողական գործողություններով:

III. Վերլուծություն

Միջազգային բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (ԲՄԱԳ) գործընթացի վերահսկողություն

Ի լրումն 2015 թ. ապրիլին համապատասխանության փորձաքննության զեկույցում ներկայացված վերլուծությանը, ՀԱՊ-ը նշում է, որ միջազգային ԲՄԱԳ-ի մի մասը հրապարակվել է ընկերության կայքում 2015 թ. մայիսին: Համաձայն ընկերության կայքի՝ ԲՄԱԳ-ի՝ շինարարության կառավարման ծրագրերին և աուդիտի մասին զեկույցներին առնչվող լրացուցիչ հասվածներն ակնկալվում էր հրապարակել 2015 թ. հուլիսին՝ սակայն սույն զեկույցը գրելու պահին դա դեռ տեղի չէր ունեցել: ՄՖԿ-ի կողմից միջազգային ԲՄԱԳ-ի վերանայմանն առնչվող փաստաթղթերը նույնպես անհասանելի էին գրելու պահին:

Հողատարածքի ձեռքբերում

Լիդիան-02 բողոքում բարձրացվում են ավելի ընդհանուր մտահոգություններ հողատարածքի ձեռքբերման առնչությամբ հաճախորդի մոտեցման մասին: Սա ենթադրում է, որ հաճախորդի հաղորդակցումը սեփականատերերի հետ թափանցիկ չէ: ՀԱՊ-ի՝ 2015 թ. ապրիլին ներկայացված զեկույցում նշվում են հողատարածքի ձեռքբերմանը, մասնավորապես ցիանային հարթակի (ՑՀ) համար նախատեսված տարածքին առնչվող խնդիրներ, որոնց վերաբերյալ մտահոգությունները ներառված էին նաև Լիդիան-01 բողոքում: Ավելի ընդհանուր կերպով անդրադառնալով հողատարածքի ձեռքբերմանը՝ 2013 թ. վերահսկողությանն առնչվող փաստաթղթերում ՄՖԿ-ն նշել էր, որ ընկերությունը մշակել է ճանապարհային քարտեզ ծրագրի շրջանակներում իրականացվող հողատարածքի ձեռքբերումն ուղղորդելու համար, ինչպես նաև վարձել վերաբնակեցման մասնագետ այդ գործընթացը կառավարելու նպատակով: ՄՖԿ-ն նաև նշել էր, որ հողատերերի հետ խորհրդատվությունն ու վերաբնակեցմանը վերաբերող գործողությունների ծրագիրը պետք է դիտվեն որպես առաջնահերթություն:

Գրելու պահին ՄՖԿ-ն զեկույցել էր ՀԱՊ-ին, որ 2015 թ. օգոստոսին իրականացվել է անկախ միջանկյալ գնահատում համոզվելու համար, որ հաճախորդի կողմից հողատարածքի ձեռքբերումը ամբողջությամբ համապատասխանում է ՄՖԿ-ի պահանջներին: Գնահատման զեկույցը հասանելի չէր զեկույցը գրելու պահին:

Առողջության և անվտանգության ապահովումն աշխատավայրում

Լիդիան-02 բողոքում նաև բարձրացվում է նոր խնդիր աշխատավայրում առողջության և անվտանգության ապահովման առչությամբ: Մասնավորապես, նշվում է, որ Ամուլսարի հանքավայրում աշխատող Գնդեվազի գյուղացիներն արդեն տուժել են բացասական

Համապատասխանության փորձաքննության մասին զեկույց: ՄՖԿ ներդրումները Հայաստանի Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերությունում (Լիդիան-02)

հետևանքներից՝ չստանալով պատշաճ բժշկական զննում և խնամք: Սակայն բողոքը չի ներառում մանրամասնություններ այս առնչությամբ և ՀԱՊ-ի գնահատման խորհրդատվությունների ընթացքում խնդրին չի տրվել ավելի խոր ընթացք⁴: Համաձայն ՄՖԿ-ի փաստաթղթերի՝ ընկերությունը վարձել է մոտ 200 աշխատող և ենթակապալառու հետազոտման գործողություններն իրականացնելու համար:

Ինչպես նշվում է ՀԱՊ-ի կողմից 2015 թ. ապրիլին կազմված փորձաքննության զեկույցում, 2007-2013 թթ. ՄՖԿ-ի կողմից իրականացվող վերահսկողությանն առնչվող փաստաթղթերում շարունակաբար բարձրացվում էր մտահոգություն ընդհանուր Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի (ԲՄԿՀ) վերաբերյալ, որը պահանջվում է Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագրով (ԲՄԳԾ): Համաձայն վերոնշյալ փաստաթղթերի՝ աշխատավայրում առողջության և անվտանգության ապահովման (ԱԱԱԱ) ընթացակարգերը, որոնք մասամբ մշակվել և իրականացվել են 2012 թ.-ից ի վեր, ակնկալվում է ներառել ԲՄԿՀ-ում: Բացի այդ, վերոնշյալ փաստաթղթերում նշվում է, որ հաճախորդի ԱԱԱԱ համակարգերը պետք է թարմացվեն ծրագրի իրականացման ընթացքում համապատասխանելու համար ԳՉ 2-ին (Աշխատանքային պայմաններ):

Եզրակացություն

Չնայած սույն փորձաքննության ընթացքում վերանայված նյութերին՝ ՀԱՊ-ի համար դեռևս անպարզ է մնում արդյոք ՄՖԿ-ի կողմից ծրագրի առնչությամբ իրականացված վերահսկողությունը բավարար էր Լիդիան-02 բողոքում բարձրացված մտահոգությունների հասցեագրման տեսանկյունից:

Մասնավորապես, ՀԱՊ-ն ունի հարցեր ՄՖԿ-ի կողմից ընկերության հողատարածքների ձեռքբերման գործընթացի վերահսկողության վերաբերյալ: Չնայած ՄՖԿ-ի պատասխանը աշխատողների և ենթակապալառուների ԱԱԱԱ ընթացակարգերի մշակման ուշացումների վերաբերյալ կլինի կարևոր ծրագրի առաջընթացի ընթացքում՝ ՀԱՊ-ը չի գտնում, որ աշխատողների առողջությանն առնչվող հարցը էապես մտահոգիչ է ծրագրի այս փուլում արձանագրված ԲՄ արդյունքների համատեքստում:

IV. Որոշում

ՀԱՊ-ի համապատասխանության փորձաքննության նպատակն է որոշել բնապահպանական և սոցիալական ոլորտներում ՄՖԿ-ի գործունեության աուդիտի նպատակահարմարությունն ստացված բողոքի առնչությամբ: Աուդիտի նպատակահարմարությունը որոշելիս ՀԱՊ-ը հաշվի է առնում մի շարք գործոններ, այդ թվում՝ բողոքում վերհանված բնապահպանական և սոցիալական մտահոգությունների կարևորությունը, այդ խնդիրների առնչությամբ

⁴ ՀԱՊ-ի Գնահատման զեկույց, Լիդիան-02՝ <http://goo.gl/3MtKSP>

Համապատասխանության փորձաքննության մասին զեկույց: ՄՖԿ ներդրումները Հայաստանի Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերությունում (Լիդիան-02)

բնապահպանական և սոցիալական ոլորտներում ՄՖԿ-ի գործունեության նախնական վերանայումը և աուդիտի նպատակահարմարության ավելի ընդհանուր գնահատումը:

2015 թ. ապրիլին հրապարակված զեկույցում ՀԱՊ-ը եզրակացրեց, որ Լիդիան-01 բողոքը առաջացնում է էական մտահոգություններ ծրագրի բնապահպանական և սոցիալական հետևանքների տեսանկյունից, ինչպես նաև հանգեցնում խնդիրների՝ կապված ՄՖԿ-ի քաղաքականության, ընթացակարգերի և չափանիշների հետ:

Սույն զեկույցում ներկայացված փորձաքննության գործընթացի միջոցով ՀԱՊ-ը վերհանել է լրացուցիչ խնդիրներ ՄՖԿ-ի կողմից իր՝ ծրագրին առնչվող ԲՄ պահանջների վերանայման և վերահսկողության, մասնավորապես՝ հողատարածքի ձեռքբերման (ԳՉ 5) վերաբերյալ:

Այս համատեքստում ՀԱՊ-ը որոշել է միասին դիտարկել Լիդիան-01 և Լիդիան-02 բողոքներում բարձրացված խնդիրները: Ուստի, երկու գործերը կմիացվեն Տեխնիկական առաջադրանքին, որը կհրապարակվի համաձայն ՀԱՊ-ի Գործառնական ուղեցույցի:

Հավելված

Լիդիան -01 և Լիդիան -02 բողոքներում քարտեզված խնդիրների հակիրճ ցանկ

Լիդիան-01	Լիդիան-02*
Սոցիալ ական և բնասպահ սրան ական խնդիրներ	
Շահագրգիռ կողմերի հետ սահմանափակ խորհրդատվություն / Բողոքների ներկայացման և դիտարկման մեխանիզմի բացակայություն	Գնդվագում անցկացված հանրային լսումների ընթացքում բողոքներ չեն արձանագրվել:
Ջերմուկի հանգստավայրում զբոսաշրջության զարգացմանը սպառնացող հնարավոր վտանգներ	
Բացասական հետևանքներ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Հայաստանում իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակություն» (ՀԳՌԿՄ) ծրագրի վրա	
Բացասական ազդեցություն Սևանա լճի, ինչպես նաև Արփա և Որոտան գետերի ավազանների էկոհամակարգերի վրա	
Բնասպահ սրան ական խնդիրներ	
Ջրի և հողի աղտոտում քիմիական խառնուրդների օգտագործման հետևանքով	Ցիանային ալկալահանման մեթոդի բացասական հետևանքները շրջակա միջավայրի և տեղի բնակչության վրա
Տարածքի ռադիոակտիվ թունավորում Ամուլսարում ուրանի պաշարների հետևանքով	Տեղանքի ռադիոակտիվ թունավորում Ամուլսարում գտնվող ուրանի պաշարների հետևանքով
Կարմիր գրքում ընդգրկված կենդանիների սպառնացող վտանգ	
Այլ խնդիրներ	

Համապատասխանության փորձաքննության մասին զեկույց: ՄՖԿ ներդրումները Հայաստանի Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերությունում (Լիդիան-02)

Տեղանքի ընտրություն և հողատարածքի ձեռքբերում ցիանային հարթակի կառուցման նպատակով	Թափանցիկության բացակայություն հողատարածքների ձեռքբերման գործընթացի հարցում
Հնագիտական վայրերի հնարավոր վտանգում	Աշխատավայրում առողջության և անվտանգության ապահովման (ԱԱԱԱ) կառավարման համակարգ ներկայումս Ամուլսարում իրականացվող գործողությունների համար

- Կարմիրով** նշված խնդիրները չեն ներառվել Լիդիան-01 բողոքում, առաջին անգամ նշվելով Լիդիան-02 բողոքում, ուստի դրանք չեն դիտարկվել Լիդիան-01-ի շրջանակներում իրականացված համապատասխանության փորձաքննության ընթացքում: